ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-17/38

ք. Երևան «12» «06» 2017 թ.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պատվիրատու/, մի կողմից, և «Յասոն» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Տ. Խուրշուդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Կատարող/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել ուսումնադիդակտիկ ցուցապաստառների տպագրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին N 2 հավելված գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 15271242 (տասնհինգ միլիոն երկու հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր երկու) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային

պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Յասոն>>
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ՍՊԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Ք. Երևան, Վրացական 16
գործառնական վարչություն	Արարատբանկ
Հ/Հ 900011005213	Հ/Հ 1510002226470100
ՀՎՀՀ 02512868	ՎՎՀՀ 02540338
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ս. Հարությունյան	_____ Տ. Խուրշուդյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1

<<12>> <<06>> 2017թ կնքված

ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-17/38 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա են հանդիսանում ուսումնադիդակտիկ ցուցապաստառների տպագրության ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն):

Ծառայությունը նախատեսում է հետևյալ ուսումնադիդակտիկ ցուցապաստառների պատրաստում.

1) <<ՀՀ զինված ուժերը>> ուսումնադիդակտիկ ցուցապատառ

Ցուցապաստառում ներկայացվում են ՀՀ զինված ուժերի ընդհանուր կառուցվածքը՝ գծապատկերի և նկարների տեսքով: Ցուցապաստառը բաղկացած է մեկ գծապատկերից և 6 լուսանկարներից: Լուսանկարներում պատկերված են փրկարար ծառայության, ոստիկանության ուժերը, հատուկ նշանակության, սահմանապահ, մոտոհրաձգային և դեսանտային զորքերը:

Ցուցապաստառի վրա ներկայացված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի խնդիրները և նշանակությունը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

2) «Ռազմաօդային ուժեր» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում են ՀՀ զինված ուժերի կազմի բաղկացուցիչ մաս կազմող ռազմաօդային ուժերի տեսակները և տեխնիկական հագեցվածությունը՝ նկարների տեսքով: Ցուցապաստառի վրա ներկայացված է Հայաստանի Հանրապետության ռազմաօդային ուժերի խնդիրները և հագեցվածությունը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը և ՀՀ ռազմաօդային ուժերի տարբերանշանը:

3) «Հակաօդային պաշտպանության զորքեր» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում են ՀՀ զինված ուժերի կազմի բաղկացուցիչ մաս կազմող հակաօդային պաշտպանության զորքերի տեսակները և տեխնիկական հագեցվածությունը՝ նկարների տեսքով: Ցուցապաստառի վրա ներկայացված է Հայաստանի Հանրապետության հակաօդային պաշտպանության զորքերի խնդիրները և հագեցվածությունը: Ցուցապաստառը բաղկացած է 7 լուսանկարներից, որոնցից՝ երկուսը ներակայցնում են Հայկական ՀՕՊ մոտավոր ծածկույթը (առանց ռադիոտեղորոշիչ կայանների), չորսը՝ <<ՊԱՆՑԻՐ-Ս>>, <<ԲՈՒԿ-Մ>>, <<Ս-300>> և <<ՕՍԱ>> հակաօդային պաշտպանության կայանները:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

4) «Հրթիռահրետանային զորքեր» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացված պետք է լինեն ՀՀ զինված ուժերի կազմի բաղկացուցիչ մաս կազմող հրթիռահրետանային զորքերի տեսակները և տեխնիկական հագեցվածությունը՝ նկարների տեսքով: Ցուցապաստառի վրա ներկայացված է Հայաստանի Հանրապետության հրթիռահրետանային զորքերի նշանակությունը և հագեցվածությունը: Ցուցապաստառը բաղկացած է 6 լուսանկարներից, որոնցում պատկերված են մարտավարական նշանակության հրթիռային <<ՏՈՉԿԱ-ՈՒ>>, <<ՏՈՊՈԼ-Մ>> համակարգերը,

ինքնագնաց հրետանային <<ԱԿՑԻԱ 2Ս3>> և <<ՀԱՈՒԲԻՑ Դ-20>>, համազարկային կրակի ռեակտիվ <<ՎՄ-80>>, <<ՍՄԵՐՉ>> կայնները իրենց նշանակությունների ներկայացմամբ: Ցուցապաստառը նախատեսված է դպրոցականների և ուսանողների համար:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

5) «Ցամաքային զորքերի հատուկ զորախմբեր» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում են ՀՀ զինված ուժերի կազմի բաղկացուցիչ մաս կազմող ցամաքային զորքերի հատուկ զորախմբերի տեսակները և տեխնիկական հագեցվածությունը՝ նկարների տեսքով: Ցուցապաստառի վրա ներկայացված է Հայաստանի Հանրապետության ցամաքային զորքերի հատուկ զորախմբերի նշանակությունը և տեսակները: Ցուցապաստառը բաղկացած է 5 լուսանկարներից, որոնցում պատկերված են ինժեներական, երկաթուղային քիմիական ավտոմոբիլային զորախմբերը և կապի ստորաբաժանումը իրենց մարտավարատեղնիկական նշանակությամբ:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

6) «Զրահատանկային և մոտորացված զորքեր» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում են ՀՀ զինված ուժերի կազմի բաղկացուցիչ մաս կազմող զրահատանկային և մոտորացված զորքերի տեսակները և տեխնիկական հագեցվածությունը՝ նկարների տեսքով: Ցուցապաստառի վրա ներկայացված է Հայաստանի Հանրապետության զրահատանկային և մոտորացված զորքերի նշանակությունը և տեսակները: Ցուցապաստառը բաղկացած է 6 լուսանկարներից որոնցում պատկերված են դեսանտային մարտական մեքենա /ԴՄՄ/-Օդադեսանտային զորքերի /ՕԴՋ/ զրահապատ թրթուրավոր լողացող, Հետևակի մարտական/ՀՄՄ/ մեքենաները, Տ-72 տանկը, մրտավարական հետախուզության/ՄՀՄ/, զրահապատ /ՏԻԳՐ/, զրահափոխադրիչ /ՋՓ/ մեքենաները, իրենց մարտավարկան նշանակության բնութագրերով:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

7) «Կալաշնիկովի ինքնաձիգ» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է կալաշնիկով ավտոմատը նրա ստեղծման տարին և նշանակությունը, ինչպես նաև կալաշնիկով ինքնաձիքի փամփուշներն ու նրանց տեսակները:

Ցուցապաստառի վրա ներկայացված է կալաշնիկով ավտոմատի ԱԿ-74, ԱԿՍ-74, ԱԿՍ-74ՈՒ, ԱԿ-47, ԱԿ-108 (կալաշնիկովի արդիականացված տարբերակը), հայկական արտադրության <<ՎԱՀԱՆ>> ինքնաձիգը և ԳՊ-30 ենթափողային նռանականետը, ինչպես նաև կալաշնիկով ինքնաձիքի սովորական, լուսածրող, զրահահար-լուսածրող, հրկիզող, զրահահար-հրկիզող փամփուշտները:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

8) «Կալաշնիկովի ինքնաձիգ (մասերն ու մեխանիզմները)» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է կալաշնիկով ավտոմատի մասերն ու մեխանիզմները և նրանց ոչ լրիվ քանդումն ու հավաքումը: Ցուցապաստառի վրա ներկայացված է կալաշնիկով ավտոմատի ոչ լրիվ քանդման ժամանակ առանձնացված մասերն ու դրանց հավաքման փուլերը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

9) «Կալաշնիկովի գնդացիր» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է կալաշնիկովի գնդացիրի մարտավարական նշանակությունը և օգտագործումը: Ցուցապաստառի վրա ներկայացված է կալաշնիկովի գնդացիրի արդյունավետ կրակի հեռավորությունը ուղիղ կրակի և վերերկրյա նշանակետի վրա կրակելու դեպքերում, ներկայացված է գնդացիրի քաշը, գնդակի սկզբնական արագությունը և մահաբեր կարողությունը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

10) «Հրաձգություն իրականացնելու կանոնները և ձևերը» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է տարբեր դիրքերից կրակ վարելու դեպքում ինքնաձիգը բռնելու և նշանոցը ընտրելու ձևերը՝ տարբեր պայմաններում (լեռնային, հարթավայրային, մառախլապատ, ծխապատ վայրերում):

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

11) «ՍՎԴ դիպուկահար հրացան» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է ՍՎԴ /Դրագունովի/ դիպուկահար հրացանի մարտավարական նշանակությունը, ստեղծումը, և օգտագործումը: Ցուցապաստառի վրա ներկայացված է ՍՎԴ /Դրագունովի/ դիպուկահար հրացանի բաղդրիչ մասերը, օժանդակ օգտագործման պարագաները, նշանառման համակարգը, գնդակների տեսակները, ինչպես նաև ՍՎԴ /Դրագունովի/ դիպուկահար հրացանի մարտավարատեխնիկական բնութագիրը: Ցուցապաստառը տեղեկություններ է պարունակում <<Սև նետ>> հայկական դիպուկահար հրացնաի մասին

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

12) «Ձեռքի նռնականետ» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է ձեռքի նռնականետի տեսակները, լրակազմը և արդիականացումը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

13) «Ձեռքի բեկորային նռնականեր» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է ձեռքի բեկորային նռնակաների տեսակներն ու կառուցվածքը: Ներկայացված են ՌԳԴ-5, Ֆ-1, ՌԳՆ, ՌԳՕ ձեռքի բեկորային նռնակները:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

14) «Ձեռքի նռնակաները նետելու եղանակներն ու կանոնները» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է երբ և ինչ պայմանների առկայության դեպքում կարելի է դրանք կիրառել ձեռքի նռնակաները և ինչ հարամաններ են անհրաժեշտ նռնակների նետման համար: Ներկայացված է նռնակի նետումը խրամատից և նետումը բաց դաշտում:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

15) «Փամփուշտը և նրա կառուցվածքը» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է մարտական փամփուշտի կառուցվածքը, տեսակները և տրամաչափերը: Ներակայցված են փամփուշտների հրկիզող, զրահահար-հրկիզող, զրահահար, պողպատյա միջուկ և լուսածրող տեսակները:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

16) «Տեղագրական քարտեզներ» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է տեղագրական քարտեզների նշանակությունը նրանց կարևորությունը մարտական գործողությունների ժամանակ: Ներկայացվում է թե ստորաբաժանումների հարամանատարները ինչ մասշտաբների տեղագրական քարտեզներով են հիմնականում աշխատում և տեղագրական քարտեզների միջոցով լուծվող կարևորագույն խնդիրների ցանկը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

17) «Քարտեզի պայմանական նշանները» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է տեղագրական քարտեզների պայմանական նշանները, դրանց նշանակությունը և առանձնահատկությունները: Ցուցապաստառը բաղկացած է 5 լուսանկարից, որոնցից չորսում ներակայցված են տեղագրական քարտեզների պայմնական նշաններն ու դրանց բացատրությունները, իսկ մեկում՝ տեղագրական քարտեզը մարտական գործողությունների պլանով:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

18) «Ազիմուտ: Ազիմուտի որոշումը տեղագրական քարտեզով և կողմնացույցով: Կուրվիմետր» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է գործնականում մագնիսական ազիմուտով շարժվելը, կողմնացույցով մագնիսական ազիմուտը գտնելը, տեղագրական քարտեզի վրա տեղանքում առարկաների միջև եղած հեռավորությունների որոշումը: Ցուցապաստառը բաղկացած է 5 լուսանկարից, որոնցից երկուսում պատկերված են կողմնացույցով կողմնորոշվելուն, մեկում պատկերված է տեղագրական քարտեզում պատկերված հեռավորության սանտիմետրային չափը իրական տարածքի վրա մետրի կամ կիլոմետրի վերածումը, մեկում՝ քարտեզի վրա կուրվիմետորվ չափումներ կատարելը, իսկ վերջինում՝ չափակարկինով և մասշտաբով իրական հեռավորթյունները գնտնելը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

19) «Կողմնորոշում տեղանքում առանց քարտեզի» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է մարտավարական պայմաններում առանց քարտեզի կողմնորոշման տեսակները և այն բնական միջոցները, որնց օգնությամբ առնց կողմնացույցի առկայության կարելի է տեղանքում կողմնորոշվել: Ցուցապաստառը բաղկացած է 4 լուսանկարից, որոնցից մեկում պատկերված է կողմնացույցով կողմնորոշվելը, մեկում՝ ժամացույցի և Արևի միջոցով հորիզոնի կողմերի որոշումը, մյուսում՝ բևեռային աստղով կողմնորոշվելը, իսկ վերջինում՝ ծառերի, մրջնանոցների, ծառերի կտրված կոճղերիեկեղեցիների և այլ առարկաների միջոցով կողմնորոշվելը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

20) «Հեռավորության որոշումը և դիտարկումը մարտի ժամանակ» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է մարտավարական գործողությունների ժամանակ կարակոցի արդյունավետությունից ելնելով որոշել առարկաների հեռավորությունները, հակառակորդի տեղաբաշխումը և գործողությունները ժամանակին հայտնաբերելու նպատակով իրականցվող դիտարկումը: Ցուցապաստառը բաղկացած է 2 լուսանկարներից, որոնցից մեկում պատկերված է առարկաների հեռավորությունների չափումը առարակների անկյունային մեծություններով, իսկ մյուսում՝ գծային չափերով:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

21) «Տեղանքի մարտավարական նկարագրում, քողարկում» ուսումնադիդակտիկ ցուցապաստառ

Ցուցապաստառում ներկայացվում է մարտավարական գործողությունների ժամանակ տեղանքի հնարավորությունների օգտագործմամբ արդյունավետ քողարկումը: Ցուցապաստառը բաղկացած է 5 լուսանկարներից, որոնցից մեկում պատկերված է առարկաների քողարկումը, իսկ մյուսներում՝ մարդու քողարկման տարբեր ձևերը:

Ցուցապաստառի վրա պետք է նշված լինի ՀՀ զիված ուժերի խորհրդանիշը:

1-21 կետերի համար.

1.Տեխնիկական չափանիշները

- չափսը՝ A3 ֆորմատ,
- կազմը՝ լամինացված,
- թուղթը՝ կավճապատ,
- տպագրությունը՝ գունավոր,

2.ցուցապաստառների հեղինակն է՝ Ա. Աբրահամյանը,

3.ցուցապաստառները նախատեսված են ՀՀ դպրոցականների և ուսանողների համար,

4.ցուցապաստառների բաշխումն իրականացվում է կատարողի կողմից համաձայն կից բաշխման ցուցակի,

5.ելքային տեղեկություններ՝ Հայ պետ ստանդարտի կոլեգիայի 1996 թ. Հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

6.Հատուկ նշագրում՝ ցուցապաստառների տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> և <<Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից>> բառերը:

Պատվիրատու՝

_____ Ն. Հարությունյան

Կատարող՝

_____ Տ. Խուրշուդյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԴԻԱԿՏԻԿ ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌՆԵՐԻ

N	Անվանումը	Երևան՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ*	Տավուշ՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Լոռի՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Շիրակ՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Արագածոտն՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Կոտայք՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Գեղարքունիք՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Արմավիր՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Արարատ՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Վայոց_Ձոր՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	Սյունիք՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ**	ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող ուս. Հաստատություններ***	ՀՀ-ում գործող մասնավոր դպրոցներ***	ԼՂՀ***	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1	ՀՀ զինված ուժերը	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
2	Ռազմաօդային ուժեր	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
3	Հակաօդային պաշտպանության զորքեր	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
4	Հրթիռահրետանային զորքեր	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
5	Ցամաքային զորքրեի հատուկ զորախմբեր	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
6	Զրահատանկային և մոտորացված զորքեր	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
7	Կալաշնիկովի ինքնաձիգ	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
8	Կալաշնիկովի ինքնաձիգի (մասերն ու մեղանիզմները)	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
9	Կալաշնիկովի գնդացիր	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
10	Հրաձգություն իրակլանացնելու կանոնները և ձևերը	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
11	ՍՎԴ դիպուկահար հրացան	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**

12	Ձեռքի նռնականետ	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
13	Ձեռքի բեկորային նռնակներ	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
14	Ձեռքի նռնակները նետելու եղանակներն ու կանոնները	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
15	Փամփուշտը և նրա կառուցվածքը	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
16	Տեղագրական քարտեզներ	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
17	Քարտեզի պայմանական նշաններ	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
18	Ազիմուտ: Ազիմուտի որոշումը տեղագրական քարտեզով և կողմնացույցով:Կուրվիմետր	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
19	Կողնորոշում տեղանքում առանց քարտեզի	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
20	Հեռավորության որոշումը և դիտարկումը մարտի ժամանակ	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
21	Տեղանքի մարտավարական նկարագրում, քողարկում	210	81	163	162	121	102	125	118	112	52	117	115	50	250	**1778**
	Ընդամենը	**4410**	**1701**	**3423**	**3402**	**2541**	**2142**	**2625**	**2478**	**2352**	**1092**	**2457**	**2415**	**1050**	**5250**	**37 338**

Ծանոթություն

* ուսումնադիդակտիկ ցուցապաստառները հանձնվում են Երևանի քաղաքապետարանի կրթության վարչություն:

** ուսումնադիդակտիկ ցուցապաստառները հանձնվում են մարզերի կրթության վարչություն:

*** ուսումնադիդակտիկ ցուցապաստառները հանձնվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչություն:

Պատվիրատու՝

---------- Ն. Հարությունյան

Կատարող՝

---------- Տ. Խուրշուդյան

Հավելված 2
<< 12 >> << 06 >> 2017թ. կնքված
N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-17/ 38 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը, հազ. դրամ	Նախատեսվում է գնել 2017թ.՝ մինչև հուլիսի 15-ը		Ընդամենը	
				քանակը	գինը, հազ. դրամ	քանակը	գինը, հազար դրամ
	Ուսումնադիդակտիկ ցուցապաստառների տպագրության ծառայություններ, այդ թվում.						
1	<<ՀՀ զինված ուժերը>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
2	<<Ռազմաօդային ուժեր>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
3	<<Հակաօդային պաշտպանության զորքեր>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
4	<<Հրթիռահրետանային զորքեր>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
5	<<Ցամաքային զորքերի հատուկ զորախմբեր>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
6	<<Զրահատանկային և մոտորացված զորքեր>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
7	<<Կալաշնիկովի ինքնաձիգ>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202

8	<<Կալաշնիկովի ինքնաձիգ (մասեր և մեխանիզմներ)>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
9	<<Կալաշնիկովի գնդացիր>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
10	<<Հրաձգություն իրականացնելու կանոնները և ձևերը>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
11	<<ՍՎԴ դիպուկահար հրացան>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
12	<<Ձեռքի նռնականետ>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
13	<<Ձեռքի բեկորային նռնակներ>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
14	<<Ձեռքի նռնակները նետելու եղանակներն ու կանոնները>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
15	<<Փամփուշտը և նրա կառուցվածքը>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
16	<<Տեղագրական քարտեզներ>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
17	<<Քարտեզի պայմանական նշաններ>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
18	<<Ազիմուտ: Ազիմուտի որոշումը տեղագրական քարտեզով և կողմնացույցով: Կուրվիմետր>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202

19	<<Կողմնորոշում տեղանքում առանց քարտեզի>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
20	<<Հեռավորության որոշումը և դիտարկումը մարտի ժամանակ>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
21	<<Տեղանքի մարտավարական նկարագրում, քողարկում>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառ	հատ	0.409	1778	727.202	1778	727.202
	Ընդամենը՝			**37338**	**15271.242**	**37338**	**15271.242**

Պատվիրատու

_____Ն. Հարությունյան

Կատարող

_____Տ. Խուրշուդյան

Հավելված 3
«12» «06» 2017թ կնքված
Ն ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-17/38 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Ենթակա է վճարման ՀՀ 2017թվականի պետական բյուջեի՝ «Ռազմագիտության կաբինետները ուսումնաօժանդակ նյութերով ապահովում» ծրագրից, ընդ որում՝				
		1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս /հուլիս/	տարի /մինչև դեկտեմբեր 20-ը/	Ընդամենը
Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ, այդ թվում՝ ուսումնադիդակտիկ ցուցապաստառների տպագրության ծառայություններ	4239			15271.242	15271.242	15271.242

Պատվիրատու

_____ Ն. Հարությունյան

Կատարող

_____ Տ. Խուրշուդյան